Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոն հրավիրում է այդ սեսիայի աշխատանքին մասնակցել և այնտեղ իրենց կարծիքներն ու առաջարկները հայտնել բոլոր նրանց, ում անհանգստացնում է սպառազինությունների մրցավազքը և ով ցանկանում է վերջ տալ դրան՝ ազգային և միջազգային կազմակերպություններին ու շարժումներին, գիտնականներին, որոնք կարող են հատուկ ավանդ մուծել այդ պրոբլեմների լուծման գործում, աշխատավորներին, որոնց ուսերին այնպես ծանր կերպով ընկած է սպառազինությունների բեռը, բոլոր նրանց, ովքեր հանուն իրենց կրոնական կամ քաղաքական սկզբունքների դատապարտում են պատերազմը։

Սպառազինությունների կրճատման ճանապարհին ամեն մի քայլ թույլ կտա զինաթափման նոր միջոցներ ձեռնարկել։ Այդ ճանապարհին ամեն մի քայլ կնպաստի վստահության վերականգնմանը և վեճերի հարցերի կարգավորմանը։ Այդ ճանապարհին ամեն մի քայլ կմոտեցնի այն ժամը, երբ անվստահության ու սարսափի տեղը կգրավի բոլոր երկրների խաղաղ համագործակցությունը, բոլոր ժողովուրդների եղբայրությունը։

Հելսինկի, 13 դեկտեմբերի 1955 թ.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈ

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 16 դեկտեմբերի 1955 թ.)

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Դեկտեմբերի 7-ին և 9-ին ակադեմիկոս Դ. Վ. Սկոբելցինի նախագահությամբ տեղի ունեցան «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեի նիստերը։

Կոմիտեն քննարկեց ընթացիկ տարվա համար Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին ստացված առաջարկները և որոշում ընդունեց այդ հարցի վերաբերյալ։

Ստորև հրապարակվում է կոմիտեի որոշումը «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» 1955 թվականի Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին։

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» 1955 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 1955 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

Խաղաղության պահպանման և ամրապնդման համար մղվող պայքարում աչքի ընկնող ծառայությունների համար՝ «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհել հետևյալ անձանց.

ԼԱՍԱՐՈ ԿԱՐԴԵՆԱՍԻՆ— Մեքսիկայի նախկին պրեզիդենտ.

ՇԵՅԽ ՄՈՒՀԱՄԵԴ ԱԼ-ԱՇՄԱՐԻՆ— Հասարակական գործիչ (Սիրիա).

ՅՈՀԵՍ ՎԻՐՏԻՆ— Գերմանիայի նախկին ռայխականցլեր (Գերմանական Ֆեդերալ Ռեսպուբլիկա).

ՏՈՆ ԴԻԿ ՏԽԱՆԴԻՆ— Վիետնամի Հայրենական ճակատի ազգային կոմիտեի նախագահ.

ԱԿԻԿՈ ՍԵԿԻՆ— *արվեստի գործիչ* (Ճապոնիա).
ՌԱԳՆԱՐ ՖՈՐԲԵԿԿԻՆ— *պաստոր, Օսլո քաղաքի տաճարի կապելլան (Նորվեգիա)։*

**Կոմիտեի նախագահ՝ ակադեմիկոս Դ. Վ. ՍԿՈԲԵԼՑԻՆ**

**Կոմիտեի նախագահի տեղակալներ՝ ԳՈ ՄՈ-ԺՈ** *(Չինաստան).*
ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ *(Ֆրանսիա)։*

**Կոմիտեի անդամներ՝**

ԱՆՆԱ ԶԵԳԵՐՍ *(ԳԴՌ),*
ԱՆՏՈՆԻՈ ԲԱՆՖԻ *(Իտալիա),*
ՋՈՆ ԲԵՌՆԱԼ *(Անգլիա),*
ՊԱԲԼՈ ՆԵՐՈՒԴԱ *(Չիլի),*
ՄԻԽԱՅԻԼ ՍԱԴՈՎՅԱՆՈՒ *(Ռումինիա),*
ՍԱՀԻԲ ՍԻՆԳ ՍՈԿՀԵՅ *(Հնդկաստան),*
ՅԱՆ ԴԵՄԲՈՎՍԿԻ *(Լեհաստան),*
Գ. Վ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ *(ՍՍՌՄ),*
Ա. Ա. ՖԱԴԵԵՎ *(ՍՍՌՄ),*
Ի. Գ. ԷՐԵՆԲՈՒՐԳ *(ՍՍՌՄ)։*

*9 դեկտեմբերի 1955 թ.*
*քաղ. Մոսկվա*

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ,
21 դեկտեմբերի 1955 թ.)

